+Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

հավելված

1. Անուն(ներ)ը, ազգանուն(ներ)ը

Արևիկ Անապիոսյան

Ռոբերտ Ստեփանյան

2. Զբաղեցրած պաշտոն(ներ)ը

ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ (ՀՀ կրթության և գիտության նախարարի պաշտոնակատարի պարտականությունները կատարող)

ՀՀ կրթության և գիտության նախարարության զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Բելգիայի Թագավորություն (Բրյուսել), 2018թ. դեկտեմբերի 3-5

4. Հրավիրող կողմը

ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն (ՅՈՒՆԵՍԿՕ)

5. Գործուղման նպատակը (աշխատանքային, որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Գլոբալ կրթության հանդիպմանը մասնակցելու նպատակով

6. Քննարկված թեմաները.

- «Կայուն զարգացման նպատակադրումներ - 2030» օրակարգում գլոբալ կրթության թիրախների և պարտավորությունների իրականացման առաջընթացի վերանայում
- Կրթությունը փոխկապակցված աշխարհում
- Ներառական և հավասար զարգացման ապահովում

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

3-օրյա հանդիպումը բաղկացած էր 2 մասից՝

- Բարձր մակարդակի տեխնիկական հանդիպում՝ ներառյալ զուգահեռ նիստերի ֆորումը (1,5 աշխատանքային օր),
- Ղեկավար կազմի հանդիպում նախարարների, փոխնախարարների և պատվիրակությունների ղեկավարների համար (1,5 աշխատանքային օր):

Հանդիպման առաջին մասում ՅՈՒՆԵՍԿՕ-ի ղեկավարության կողմից ներկայացվել են «Կայուն զարգացման նպատակադրումներ - 2030»-ի շրջանակում իրականացված քայլերը, վերանայվել Կայուն զարգացման նպատակադրումներում կրթական ոլորտի առաջընթացը, ինչպես նաև՝ քննարկվել կրթական ցուցանիշների մշակման, մեթոդաբանության, հաշվարկման, հավաքագրման, ներկայացման ու բարելավման հետ կապված հարցերը:

Անդրադարձ է կատարվել նաև Կայուն զարգացման նպատակադրումներում տարածաշրջանային հեռանկարների, առաջնահերթությունների ու քաղաքականությունների շեշտադրումներին:

Կարևորելով կրթության համակարգի դերը կայուն, ներառական և ճկուն հասարակության կայացման հարցում՝ կազմակերպվել են քննարկումներ «կլոր սեղանի շուրջ» ձևաչափով՝ ուսումնասիրելու համար կրթության և զարգացման միջև առկա փոխկապակցվածությունը:

Հանդիպման երկրորդ մասում, որպես առանցքային հարցեր ընդունելով ներառականության ու գենդերային հավասարության ապահովումը, ընդգծվել են ոլորտի ձեռքբերումները, ինչպես նաև առկա խոչընդոտները, առաջարկվել ոչ ոքի կրթությունից դուրս չթողնելու նպատակին հասնելու քայլերը:

Քննարկվել են նաև կրթության ոլորտում միգրացիայի, ուսուցիչների դերի և մի շարք այլ գործոնների փոխկապվածությունն ու ազդեցությունը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ընթացքում ընդունվել է համաժողովի եզրափակիչ փաստաթուղթը, որտեղ հրավիրված երկրները, այս թվում նաև Հայաստանը արձանագրել են իրենց վճռականությունը համագործակցել 2030 Կայուն զարգացման նպատակների իրականացման ուղղությամբ: Կողմերը հետաքրքրություն են ցուցաբերել Հայաստանում ներառական կրթության ներդրման փորձի, ինչպես նաև այլընտրանքային մոդելներով

նախադպրոցական կրթություն իրականացնելու ռազմավարության նկատմամբ: Համաձայնություն է ձեռք բերվել, որ Հայաստանը որպես հրավիրվող կողմ կմասնակցի 2019-2020 թվականներին Կայուն զարգացման 4-րդ նպատակի իրականացման համակարգող հանձնաժողովի հանդիպումներին:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հետևյալ առաջարկությունները նախարարության կողմից աշխատանքային կարգով ներկայացվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ին կրթության ոլորտում պետք է կարևորվի նորարարությունը; կրթական հաստատությունները հակամարտությունների ժամանակ պետք է զերծ լինեն ռազմական թիրախ դառնալուց կամ ռազմական նպատակներով օգտագործվելուց; կրթության ոլորտի ցուցանիշների հավաքագրման մեթոդաբանությունը և մեխանիզմները պետք է միասնականացվեն: Առաջարկությունների վերջնական տեքստը հասանելի կլինի ՅՈՒՆԵՍԿՕ-ի համապատասխան կայքում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Արևիկ Անանիոսյան 12.12.18